Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ֆիզիկա 9 /ինը դասաժամ/ թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձև 1):
- մեկ լուսանկար՝3X4 չափի:
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ):
- անձը հաստատող փաստաթուղթ:
- «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք: աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում):
- ինքնակենսագրություն (Ձև 5):
- այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում):
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի նոյեմբերի 6-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ գյուղ Հատիս 1/1:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (+374) 94 11 71 40 հեռախոսահամարով: